ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1952 Общественные науки

**ԼՐԱՏՈՒ**

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԻՍՏԸ, ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*1952 թ. հունիսի 20—21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նիստը, նվիրված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հրապարակման երկրորդ տարեդարձին։*

*Ներածական խոսքով նիստը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Դ. Ա. Ղափանցյանը, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները. Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը որպես մարքս-լենինյան փիլիսոփայության զարգացման նոր էտապ։ Զեկուցող՝ Վ. Վ. Ղազանջյան։ Որակական անցումները լեզվի մեջ։ Զեկուցող՝ պրոֆ. դոկտոր Է. Բ. Աղայան։*

*Հունիսի 21-ին լսվեցին հետևյալ զեկուցումները. Ժամանակակից հայերենի կազմավորումը։ Զեկուցող՝ փիլոլոգ. գիտ. թեկնածու Ս. Ղ. Ղազարյան։ Հայ բարբառագիտության մի քանի հարցերը ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ։ Զեկուցող՝ փիլոլոգ. գիտ. թեկնածու Ա. Վ. Գրիգորյան։ Սովետական հնագիտության անելիքները Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ։ Զեկուցող՝ պատմ. գիտ. թեկնածու Կ. Գ. Ղաֆադարյան։ Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը և սովետական գրականության հետագա զարգացման ուղիները։ Զեկուցող՝ պրոֆ. Հ. Մ. Մելիքյան։ Հայ բանասիրության խնդիրները Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ։ Զեկուցող՝ պատմ. գիտ. թեկնածու Լ. Ս. Խաչիկյան։*

*Կարդացված զեկուցումները կտպագրվեն «Տեղեկագրի» հաջորդ համարներում։*

# Ե Ր Ե Կ Ո Ւ Յ Թ
# ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*1952 թ. մայիսի 20-ին Թբիլիսիի Ռուսթավելու անվան թատրոնի համերգային դահլիճում կայացավ հատուկ երեկույթ, նվիրված հայ մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակին։ Երեկույթը անցավ շատ արդյունավետ և վերածվեց անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական ջերմ սիրո ու բարեկամության ցույցի։*

*Երեկույթին ներկա էին Վրաստանի մայրաքաղաքի ձեռնարկությունների բազմաթիվ ստախանովականներ, գիտության, արվեստի ու գրականության աշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ։ Ներկա էր երեկույթին մասնակցելու համար Երևանից ժամանած պատվիրակությունը՝ Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանի ղեկավարությամբ։*

*Երեկույթը բաց արեց ՎՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ՝ պրոֆեսոր Ա. Շանիձեն։ Իր ներածական խոսքում պրոֆեսոր Շանիձեն նշում է հայ և վրաց ժողովուրդների դարավոր համատեղ պայքարը օտարերկրյա զավթիչների ու տեղական հարստահարողների դեմ, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի արժեքավոր ավանդը՝ անդրկովկասյան ժողովուրդների մեջ փոխադարձ սեր և եղբայրության զգացում պատվաստելու գործում։*